

Ս Ի Ո Ն

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Երբոր երկիրներու համար ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգինն է
Անգլ. Նոյեմբ 6 (Ամեր. Դեկտ 1.50) կամ անոր համարժէքը
Յաւանեայ կամ վեցանեայ բաժանորդագրութիւն չկայ:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆԻ ԿԱՆՔԻԿ Է

Lwught' Rédaction de la Revue Arménienne SION

Patriarcat Arménien

JÉRUSALEM — Palestine

ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՅՈՒՅԼԵԱՆ Պ. Վ. ԹԵՔԷԵԱՆԻ

Պ. Վահան Թէքէեանի գրական գործունէութեան քառասնամեայ յորելեանը առ-
նելու համար քաղաքիս մէջ կազմուեցաւ Յանձնախումբ մը, որուն կը մասնակցին
Տիկիներն Ե. Աւետիսեան, Զ. Պահրի, Ա. Պուտաղեան, Մ. Սթամպուլեան, Տարիա
Կամսարական, Օր. Մ. Բարայեան եւ ՊՊ. Ա. Ահարոնեան, Բրոք. Կ. Աղաջանեան,
Ա. Անտոնեան, Բրոք. Ն. Աղոնց: Տոքթ. Բ. Արթիւնեան, Լ. Բալուեան, Լ. Բաշալ-
եան, Ռ. Բէրբէրեան, Արշակ Խան Գորոյեանց, Բ. Գույումճեան, Մ. Ս. Դաւիթ Բէգ,
Զարեհ Պէյ Նուպար, Բ. Զաւրեան, Պ. Էմմէրեան, Էտկառ Շահին, Բ. Թեյեան, Տոքթ.
Վ. Բ. Թորգոմեան, Լ. Յովհաննէս Թորոսեան, Տոքթ. Ա. Ինճեան, Տ. Կամսարա-
կան, Լ. Կիւմիւշկէրտան, Գ. Կոստանեան, Ա. Համբարձումեան, Ա. Հանըմեան, Ա.
Հարենց, Հրաչ Երուանդ, Օ. Հէքիմեան, Պ. Զիւհէրեան, Ա. Զիւմպիւշեան, Վ. Մա-
լէգեան, Մ. Մեղպուրեան, Շ. Նարգունի, Գ. Նորատուէկեան, Ա. Շահխաթունի, Շ.
Շահնուր, Ռ. Շիշմանեան, Ա. Չաքրեան, Ա. Չօպանեան, Մերուժան Պարսամեան,
Մկրտիչ Պարսամեան, Լ. Պէրպէրեան, Բ. Սարաճեան, Բ. Սարաֆեան, Ա. Վաչեան,
Տոքթ. Ա. Փաշաճեան, Տիգրան Խան Քէլէկեան, Տոքթ. Պ. Քօլօլեան, Գ. Ֆէնէրճեան,
Բ. Ֆրէնկեան:

Այս Յանձնախումբը իր առաջին նիստը զուգարեց 15 յուլիսին, Նուպարեան
Մատենադարանին մէջ, նախագահութեամբ Պ. Լ. Կիւմիւշկէրտանի, օրակարգ ունե-
նայով պատուոյ նախագահներու եւ գործադիր մարմնի ընտրութիւնը:

Պատուոյ նախագահ ընտրուեցան Դերյ. Լ. Յովհաննէս Թորոսեան, ՊՊ. Ա. Ա-
հարոնեան, Զարեհ Պէյ Նուպար, Տիգրան Կամսարական, Լեոն Կիւմիւշկէրտան, Ար-
շակ Չօպանեան եւ Տիգրան Խան Քէլէկեան:

Յօդելինական Գործադիր Մարմինը կազմուեցաւ հետեւեալ կերպով. —

ՊՊ. Լեոն Կիւմիւշկէրտան (ատենապետ), Ա. Չաքրեան (ատենադպիր), Ա.
Համբարձումեան (գանձապետ), Լ. Բաշալեան, Ռ. Բէրբէրեան, Բ. Գույումճեան, Բ.
Թեյեան, Լ. Պէրպէրեան, Գ. Ֆէնէրճեան:

Որոշուեցաւ յառաջիկայ աշնան կատարել յօդելինական հանդէսը, Գործադիր
Մարմինն թողլով որոշել վերջնական թուականը եւ յարաբերութեան մասնել ուրիշ զա-
ղութներու հետ եւս:

ԿՈՉ Ի ՆՊԱՍՏ ՆԵՐԳԱՂԹԻ

Հայրենակիցներ,՝

Խորհրդային Հայաստանի յարաճուն վերելքին նուիրուած իր քաղաքացիական աշխատութեանց գուգրն-թաց՝ մեր կառավարութիւնը տարիներէ ի վեր մշակած է նաեւ յատուկ ծրագիր մը արտասահմանի հայ աշխատաւորներու կարելի չափով զանգուածային ներգաղթին համար:

Համաձայն պաշտօնական յայտարարութեանց՝ զորքը, աշխատանքը չէ որ կը պակսի Խ. Հայաստանի մէջ, այլ՝ **բնակարանը**: Տասնեակ մը հազար աշխատաւորներու պէտքը զգալի է ժողովրդական տնտեսութեան հետզհետէ զարգացող այլ եւ այլ ճիւղերուն մէջ:

Եթէ անցեալ տարի հինգ կարաւաններով 8000է աւելի աշխատաւորներ կրցան ներգաղթել, առիկա եղաւ շնորհիւ այն հանգամանքին որ կառավարութիւնը բացի այդ կտրուաններուն տեղաւորման խոշոր ծախքերէն իր պիւտճէէն կարեւոր գումարներ յատկացուց նաեւ բնակարաններու կառուցման համար:

Յայտնի է արդէն որ Խորհ. Հայաստանի ազգաբնակչութեան աճման բերումով բնակարաններու մեծ պակաս կը զգացուի: Հետեւաբար, ներգաղթի ծրագրի աւելի լայն չափով եւ արագ կերպով իրականացման համար անհրաժեշտ է քաղաքի բնակարաններու շինութիւնը:

Ինչպէս մեր կառավարութեան նախագահ՝ Ս. Տէր Գաբրիէլեանը յայտարարեց 1931ին Բարիկ զրտնուած միջոցին, Հայաստանի աշխատաւոր ժողովուրդը եւ կառավարութիւնը կը սպասեն, որ արտասահմանի հայ ժողովրդական լայն զանգուածները իրենց աջակցութիւնը բերեն բնակարաններու կառուցման թէ՛ ներգաղթի եւ թէ՛ Հայաստանի վերաշինութեան կրկնապէս սիրելի եւ թանկագին գործին մասնակցելու համար:

Խ. Հայաստանի քաղաքացիական կազմակերպութիւններն ու անհատները սկսած են գիտակցել իրենց վրայ ինկած պարտականութեան: Կարգ մը շրջաններու մէջ Հօկի եւ Բարեգործականի մասնաճիւղերը արդէն լծուած են գործի ներգաղթի ֆոնաի գոյացման համար:

Այս նպատակով թափուած ջանքերը ընդլայնելու, շերտաշինելու եւ հանգանակութեան ընդհանուր գործը ղեկավարելու համար, Հօկի գլխաւոր Վարչ. նախագահ Դր. Վարդանեան, ընդառաջելով շատ կողմերէ յայտնուած ցանկութիւններուն, նախաձեռնեց **ՆԵՐԳԱՂԹԻ ՖՕՆՏԻ ԿԵԴՐՈՒԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻ** մը կազմութեան՝ Հայ. Բար. Ընդհ. Միութեան եւ Հայաստանի Օգնութեան Կոմիտէի սերտ գործակցութեամբ:

Այս երկու կազմակերպութիւններու ներկայացուցիչներէն քաղկացած նորակազմ ներգաղթի Կեդր. Մարմինս, պաշտօնապէս բացուած յայտարարելով **ՆԵՐԳԱՂԹԻ ՖՕՆՏԻ ՄԵՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆԷ՛**, կոչ կ'ուղղէ ամենքին՝ բերելու իրենց արտաբուրգիս եւ փութկոտ աջակցութիւնը:

Ճիշդ է, անտեսական ներկայ պայմանները այնքան նպաստաւոր չեն: Եւ, սակայն, այս գործը կենսական է: Խորհրդային Հայաստանի քաղաքացիները եւ արտասահմանի հայ աշխատաւորները ներգաղթի միջոցով փրկութիւնը ցանկացող ամէն մէկ հայ անշուշտ պարտականութիւն պիտի տեսնէ իր բոլոր կարելիքն ընել: Ամենահամեստ նուէրներն ալ սիրով կ'ընդունուին:

Ամէն մէկ նուիրատու պէտք է այն արտապնդիչ գոհունակութիւնը ունենայ, թէ այս նուիրատուութեամբ Հայաստանի վերաշինութեան մէջ իր բարն ալ դրած պիտի ըլլայ:

Այսօր հազարաւոր հայ գաղթականներ տնտեսական տագնապի հետեւանքով անգործութեան մատնուած թշուառ կեանք մը կը վարեն զանազան երկիրներու մէջ: անոնք ակընդէտ կը սպասեն ներգաղթի նորանոր կարաւաններու կազմութեան, ժա՛մ առաջ երթալու իրենց բազուկները աշխատաւորական Հայաստանի ի սպաս դնելու համար:

Վստահ ենք որ ներգաղթի այս հանգանակութիւնը պիտի ստեղծէ այնպիսի րուռ եւ համատարած ոգեւորութիւն որ պիտի վարակէ նոյն իսկ ամենէն անտարբերները, այն համոզումով թէ ամէն մէկ նուիրատուութիւն, իբր Հայաստանի կամաւոր տուրք, պիտի ծառայէ այնտեղ բնակարանի մը շինութեան եւ գաղթականի մը փրկութեան:

Բարիկ 27 Յունիս

9, Rue Boudaloue, PARIS (9)

ՆԵՐԳԱՂԹԻ ՖՕՆՏԻ ԿԵԴՐ. ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Օգնութեան Կոմիտէի

Գլխ. Վարչ. նախագահ՝

ԴՐ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ՝ Փխ — Նախագահ

Դ. ԹԱՀՄԱԶԵԱՆ՝ Քարտուղար

ՏՌԲԹ. Հ. ԴԱԼՃԵԱՆ

ԶԱՐԵՀ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ՝ Նախագահ

Լ. ԿԻՐՄԻՆԵՎԻԼՏԱՆ՝ Դամնապահ

Վ. ՄԱԼԷՋԵԱՆ

ԴԱՆՈՒԹ. — Դամական առաքումներ կատարել Դամնապահի հասցեով՝ Mr. L. GUMUCHGUERDAN, 11, Square Alboni, PARIS (16):

ԼՈՑՍ ՏԵՍԱՆ

ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԳՈՒՐԵԱՆԻ ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Ե. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)

Գին 1 շիլին: Երես 156:



ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՊԱՐՏԻԶԱԿՅՈՑ

ԵՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԻԶԱԿԻ
ԵՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԵՒ ՎԱՐՔԱՐԱՆԻՆ



ԱՐԱՐԵԱԼ

Ի Տ. ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱՅԷ Տ. ԳՐԻԳՈՐԵԱՆ



ԵՐՈՒՍԱԿԷՄ

ՏՊԱՐԱՆ ՍՐՐՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

1933



ՄԱՄԼՈՑ ՏԱԿ Է

ԳՈՒՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ, ԹԻՒ Յ

ԱՄԲՈՂՋ ԵՐԿԵՐ

ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐՔ ԳՈՒՐԵԱՆԻ
Բ.

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԿՐՕՆԸ

ԿԱՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ